

ՀՈՎԱՏՓ ԱԹԱՔԵԿԱՆ

ԱՐՏ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Այս տարի լրանում է Ա. Մարտի և Ֆ. Էնգելսի հանձարեղ ստեղծագործության՝ «Կոմունիստական պարտիայի մանիֆեստ»-ի հայերեն հրատարակության 55 տարին: Հանրահայտ է, որ Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ Երկրորդ համադամարից հետո ժնկում ՌՍԴԲՊ Կենտկոմին կից կազմակերպվեց վրացերեն և հայերեն լեզուներով պարտիական սոցիալ-դեմոկրատական գրականություն հրատարակող մասնաժողով, որի ղեկավարը հաստատվեց Ստեփան Շահումյանը: Ահա այդ մասնաժողովի հայերեն հրապարակած գործերի թվին էր պատկանում նաև 1904 թվականին ժնկում առաջին անգամ հայերեն լեզվով լույս տեսած Կոմունիստական մանիֆեստը: Այդ հրատարակության հենց առաջին էջում մենք կարդում ենք հետևյալը.

«Քաղաքացի»

«Տպագրության տալով «Կոմունիստական մանիֆեստ»-ի հայերեն թարգմանությունը՝ մենք պարտք ենք համարում հայտնել հետևյալը.

Այս հրատարակության համար մենք ձեռքի տակ ունեցել ենք Երեք տարբեր թարգմանություններ: Առաջինը արված է գերմաներեն վեցերորդ տպագրությունից, Շտուտգարդ (Գերմանիա), 1894 թ., Երկրորդը՝ Դ. Պիլսոնովի ռուսերեն թարգմանությունից, Կովկաս, 1901 թ., և Երրորդը (տաճկահայկական բարբառով)՝ Պ. Լաֆարգի ֆրանսերեն թարգմանությունից, Ժրնև, հավանորեն 1902—03 թվականներին:

Ներկա հրատարակությունը ներկայացնում է զլխավորապես առաջին և Երկրորդ թարգմանությունների միացումը՝ ուղղված և խմբագրված համաձայն վերջին գերմանական հրատարակության:

Ժրնև, 25 օգոստոսի, 1904 թ.:

Այսպիսով, թարգմանիչը հայտնում է, որ 1904 թ. Կոմունիստական մանիֆեստի հրատարակությունը ներկայացնում է զլխավորապես 1894 թ. Շտուտգարդի և 1901 թ. Կովկասի թարգմանությունների միացումը՝ «ուղղված և խմբագրված համաձայն վերջին գերմանական հրատարակության»:

Չնայած Ստեփան Շահումյանի այս բացորոշ հայտարարության, բայց որի 1904 թ. հրատարակության համար օգտագործվել է նաև 1894 թ. Շտուտգարդի հայերեն թարգմանությունը, մեր գրականության մեջ շատերի կողմից բոլորովին անտեսվել է այս փաստը, իսկ ոմանց կողմից էլ անտեսվել է 1904 թ. Կոմունիստական մանիֆեստի ժնկի հայերեն հրատարակությունը և Մանիֆեստի առաջին հայերեն հրատարակությունը անհիմն կերպով վերագրվել է Բարվի Նոոիս-դեմոկրատական բանվորական Հայ կոզմակերպությանը (հայ ռուսացիֆիկներին), 1906 թ. հրատարակություն):

Անհեթեթություն կլիներ, հակառակ պատմական ակնհայտ փաստի, Մանիֆեստի հայերեն հրատարակության սկզբնավորությունը վերագրել 1906 թ. Բարվի, և ոչ թե 1904 թ. ժնկի հրատարակությանը: Հարյի այս կողմը ինքին պարզ ու անփիճելի պատմական ճշմարտություն է և հիմնավորման կամ պարզարանման կարիք չունի:

Մինչդեռ Ստեփան Շահումյանի հայտարարությունը 1894 թ. Շտուտգարդի հայերեն թարգմանության վարիանտի մասին արժանի է խոր ուսումնասիրության, ոչ միայն նրա համար, որ Խոսր վերաբերում է մարքսիստական գրականության ծերեղ երգուցին, այլև այն պատճառով, որ մեր գրականության մեջ դժբախտաբար դեռ միշտ այսօր էլ շրջանառության մեջ են սխալ բնորոշումներ ու զնահատականներ, թե՛ Շտուտգարդի թարգմանչի և թե՛ նրա ու Ֆ. Էնգելսի միջև տեղի ունեցած նամակագրության մասին:

Հավագույն ղեկավարում ասվում է, որ 1894 թ. Շտուտգարդում ոմն Հովսեփ Աթաբեկյան՝ ձեռնարկելով Կոմունիստական մանիֆեստի թարգմանությունը, նամակով խնդրում է Ֆ. Էնգելսին գրել Առաջարկ հայերեն թարգմանության համար, իսկ Ֆ. Էնգելսը մերժում է Հ. Աթաբեկյանի խնդիրը: Այսպիսով, Հովսեփ Աթաբեկյանը մի կողմից ներկայանում է մեզ որպես սոսկ թարգմանիչ և մյուս կողմից էլ այս թարգմանիչ և Ֆ. Էնգելսի միջև տեղի ունեցած նամակագրության փաստի մեջ շեշտը գրվում է միայն Ֆ. Էնգելսի մերժումի վրա:

Բայց թե ի՞նչ է գրել Հովսեփ Աթաբեկյանը Ֆ. Էնգելսին և ի՞նչ է պատասխանել Ֆ. Էնգելսը Աթաբեկյանին ոչ միայն Կոմունիստական մանիֆեստի հայերեն թարգմանության, այլև հայ ժողովրդի սոցիալական, ազգային-ազատագրական պայքարի ու նրա պատմական հեռանկարների մասին — այս կարևոր հանգամանքները մեր շատ տեսարանների բազմակողմանի քննությանն ու լուսարանությանը չեն ենթարկվել:

Նախ ո՞վ էր Հովսեփ Աթաբեկյանը. արդյոք նա լոկ թարգմանիչ էր, թե՞ իննսունական թվականների հայ մարքսիստներից մեկը:

Հովսեփ Աթաբեկյանը ծնվել է 1870 թ. հոկտեմբերի 20-ին Նախկին Ղազախի գավառի Դաղքիստան գյուղում: Նրա հայրը՝ Ներսես Ասլանի Աթաբեկյանը, այդ ժամանակ հաշտարար դատավոր էր Ղազախում: Թիֆլիսի առաջին արական գիմնազիան ավարտելուց և երկու տարի Պետերբուրգի համալսարանում ուսանելուց հետո Հովսեփ Աթաբեկյանը մեկնում է Գերմանիա, սովորում Հոհենհայմի գյուղատնտեսական ակադեմիայում, որն ավարտելուց հետո անցնում է Վյուրտեմբերգի մայրաքաղաք՝ Շտուտգարդ: 90-ական թվականներին Շտուտգարդի Գերմանիայի մարքսիստական գաղափարախոսության կենտրոնն էր. այդտեղ էր լույս տեսնում գերմանական սոցիալ-դեմոկրատիայի տեսական օրգան «Neue Zeit»-ը, այդտեղ էրն ստացրել Կարլ Կաուցկին, Կարա Յետկինը՝ ամենահայտնի կին հոստորր Գերմանիայում. Պարվուսը. հաճախ այդ քաղաքը այցի էին գալիս սոցիալ-դեմոկրատական շարժման ականավոր գործիչներն ու ղեկավարները՝ Ալգուստ Բեքերը, Վիլհելմ Լիբկեխտը, Վիկտոր Ադլերը և ուրիշներ:

Ահա թե ինչ է գրում Հովսեփ Աթաբեկյանի մասին մարքսիզմի հակառակորդ ժամանակակիցներից մեկը. «Նա ապրում էր Պարվուսի հետ և մտերիմ հաճախորդն էր Կաուցկու և Յետկինի: Նա չէր կարդում, այլ պարզապես կանում էր մարքսիստական գրականությունը: «Կապիտալ»-ը նրա աչքում ավետարանների ավետարանն էր, բոլոր իմաստությունների և գիտական ճշմարտությունների ամփոփումը: Մարքսը և Էնգելսը՝ մի տեսակ կիսաաստվածներ»:

«Նա տրվել էր նոր ուսմունքին իր ամբողջ էությունը և հայի, արևելցու կրակոտ խառնվածքով: Շտուտգարդի մարքսիստների սիրելին էր նա. երկար ժամանակ չէին մոռանում այնտեղ «den feurigen armenischen genossen» (վառվռուն հայ բնակերոջը)»¹:

1894 թվականին Հովսեփ Աթաբեկյանն ուղևորություն է կատարում Իտալիա, լինում է Տուրին, Միլան, Նեապոլ, Կալարիոյա քաղաքներում, այնուհետև Սիցիլիայում և այլ վայրերում: Նա ոտքով անցնում է հազարից ավելի քաղաքներում, աշխատում Պո գետահովտի բամբակի և բրնձի պլանտացիաներում որպես սեզոնոր բանվոր, խորացնում իր գիտելիքները հարավի դաշտային կուլտուրաների ագրոտեխիկայի ուսումնասիրման ասպարեզում, հետագայում դրանք հայրենիքում կենսագործելու և գյուղացիության դրությունը բարելավելու համար. այդ միտքը, ինչպես հաղորդում է Հովսեփ Աթաբեկյանի Շտուտգարդի շրջանի բնակիչ Գեորգ Մելիք-Կարա-կոզովը, «տառաջիորեն նրան (Հովսեփ Աթաբեկյանին) ալեկոծում, հուզում էր»²:

Բացի այդ, նա բուսումնասիրում է Իտալիայի քաղաքային և գյուղական պրոլետարիատի վիճակը և վերադառնալով Շտուտգարդ՝ մի շարք հոդվածներ է հրապարակում գերմանական սոցիալ-դեմոկրատիայի տեսական հանդես «Neue Zeit»-ում: Իտալիայում նա անձամբ ծանոթանում է Տուրատիի, Դիֆելիչիի, Բարբատտիի և այլ հեղափոխական գործիչների հետ: Հովսեփ Աթաբեկյանի գլխավորությամբ առաջին անգամ հայերեն է թարգմանվում Ֆ. Էնգելսի «Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն»:

1894—1896 թվականներին Հովսեփ Աթաբեկյանի նախաձեռնությամբ և անմիջական մասնակցությամբ գերմաներեն բնագրից հայերեն է թարգմանվում Մարքսի և Էնգելսի «Կոմունիստական մանիֆեստ»-ը: Ցանկանալով Էնգելսից «Կոմունիստական մանիֆեստ»-ի հայերեն թարգմանության համար առաջարկ ստանալ, Հովսեփ Աթաբեկյանն այդ մասին մի ծավալուն նամակով 1894 թ. նոյեմբերի 1-ին դիմում է Էնգելսին: Այդ նամակում Հ. Աթաբեկյանը տալիս է Հա-

¹ «Հորիզոն», 1916, № 14, «Հովսեփ Աթաբեկյան».

² «Тифлисский листок», 1916, № 16.

յատարանի պատմության ուրվագիծը և ազգային-ազատագրական շարժման բնութագիրն ու բնթագրը¹:

Որքան մեզ հայտնի է, առաջին անգամ մեր գրականության մեջ ընկեր Աշոտ Հովհաննիսյանն է իր «Ֆ. Էնգելսը և հայկական հարցը» աշխատության մեջ շարադրել ու վերլուծության ենթարկել Աթաբեկյանի կողմից Էնգելսին ուղղված այդ նամակի բովանդակությունը: Բերենք այդ նամակից մի քանի ուշագրավ տեղեր.

Ի տարբերություն 90-ական թվականների հայ ազգայնական դադափարախոսների ու հրապարակախոսների, Հ. Աթաբեկյանը նշում է հայ կապիտալիստների հարստահարիչ գերն ու գործունեությունը թուրքիայում, կապիտալիստների, որոնք Հ. Աթաբեկյանի արտահայտությամբ «ավազակարար բուրգ ցեղերի և թուրք փաշաների հետ մեկտեղ թալանում և կեղերում են գյուղական բնակչությունը»:

Ինչումն է տեսնում Հ. Աթաբեկյանը կոմկոստալիստների անելիքը. «Նրանց (կոմկոստալիստների—Ա. Ե.) պատմությունը, ինչպես նաև նրանց հեղափոխական շարժումը,—գրում է Հ. Աթաբեկյանը,— զուգընթաց է Ռուսաստանի պատմության: Մոխի միաճանաչության դեմ—ահա այն անկյունարարը, որին դեմ են առնում Ռուսաստանի կայսրության—վերոպական ռեակցիայի հակապական պահեստադնդի բոլոր ժողովուրդները»:

Ինչպես նշեցինք, Հ. Աթաբեկյանի այս նամակը գրված է Ֆ. Էնգելսին 1894 թ. նոյեմբերի 1-ին: Այստեղ պարզորոշ գրված է կոմկոստալիստների անելիքը՝ անմիջականորեն ներգրավվել համառուսական հեղափոխական շարժման մեջ և տապալել ցարիզմը: Սա մի դրույթ էր, որ դրանից տասը տարի առաջ անտեսվում էր անգամ հայ նարոդնիկական-հայրենասիրական խմբակների կողմից, մի դրույթ, որի դեմ այդ թվականներին կատաղի պայքար էին մղում բուրժուական և մանրբուրժուական նացիոնալիստական պարտիաները՝ դաշնակցությունն ու հնչական կուսակցությունը, ըստ որում այդ դրույթի կողմնակիցներն ու պաշտպանողները որակվում էին հրչյալ ազգայնական պարտիաների կողմից որպես «ազգի ուժը չխտողներ», «ազգային դատի դավաճաններ»:

Ութ տարի հետո, 1902 թ., այս դրույթը իր զարգացումը գտավ Ստ. Շահումյանի, Բ. Կնուսյանցի, Աբշ. Զուրաբյանի, Ս. Խանոյանի, Ա. Երզնկյանի և այլոց կողմից գլխավորած «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» մանիֆեստում:

Ի՞նչ պատասխանեց Ֆ. Էնգելսը Հովսեփ Աթաբեկյանի 1894 թ. նոյեմբերի 1-ի թվագր. նամակին: Ստորև մենք բերում ենք Էնգելսի պատասխան նամակը ամբողջովին:

Լոնդոն, 1894 թ. նոյեմբերի 25-ին:

Հարգելի կուսակից.

Շատ շնորհակալ եմ Ձեզից իմ «Գիտական սոցիալիզմի զարգացման» և նորերս «Կոմունիստական մանիֆեստ»-ը թարգմանելու համար: Ցավում եմ, որ չեմ կարող բավականություն տալ Ձեր ցանկությանը, մի քանի տող գրել Ձեր այդ նոր թարգմանության Առաջաբանի համար: Ես չեմ ուզում գրել մի բան, որը պետք է հրատարակվի օտար, ինձ համար անհասկանալի լեզվով: Եթե ես այդ անեմ հատկապես Ձեր խաթրու համար, այլևս ոչ ոքի չեմ կարողանա մերժել նույնանման զեպրերում: Եվ դրա հետևանքը կարող է լինել, որ մի գեղեցիկ օր իմ խոսքերը անգիտակցաբար կամ նույնիսկ գիտակցաբար խեղաթյուրված լույս կտեսնեն, և ես այդ կամ բոլորովին չեմ իմանա և կամ կիմանամ միայն տարիներ հետո:

Բացի այդ,— որքան էլ որ ես շնորհապարտ լինեմ Ձեզ. հայկական իրականության Ձեր հետաքրքիր նկարագրության համար,—աչնուամենայնիվ ես չեմ կարող կարծիք հայտնել այդպիսի մի խնդրի մասին, որը ես անձամբ չեմ ուսումնասիրել, մանավանդ ներկա զեպրում, էրբ այդ վերաբերում է մի ճնշված ժողովրդի, որը դժբախտություն ունի ստիպված ապրելու տաճկական բռնակալության Սցիլայի և ռուսական բռնակալության խորհրդային արանքում, մի ժողովրդի, որի վերաբերմամբ ռուսաց ցարիզմը ազատագրողի դեր է ուղում կատարել և որի

¹ Այդ նամակի բնագիրը, ինչպես հայտնում է Հովսեփ Աթաբեկյանի զուտոր, գոհար-պրոֆեսոր Անահիտ Աթաբեկյանը Մոսկվայից, գտնվում է Ամստերդամում, Ֆ. Էնգելսի արխիվում, որը գերմանական սոցիալ-դեմոկրատական պարտիայի կենտրոնական վարչության իրավասության տակ է:

Այս նամակի պատճենը հրապարակվում է Պատմա-բանասիրական հանգեսի սույն համարում:

ազատագրության համար ասված ամեն մի համակրական խոսք ուսուցչ ստրկական մամուլը արխատում է շահագործել հօգուտ նվաճողական ցարիզմի:

Սակայն իմ անհատական անկեղծ կարծիքը այն է, որ Հայաստանի ազատագրությունը տաճիկների և ռուսների ձեռքից կարող է տեղի ունենալ միմիայն ռուսական ցարիզմի տապալման օրը:

Ամենայնով ցանկություններով Ձեր ժողովրդի համար՝ Ձեր խոնարհ՝ Ֆ. Էնգելս:

Ոչ ոք մեր ժողովրդի ապրած պատմական իրադրությունը այնպես խորը, այնպես հակիրճ ու ճշմարտացիորեն չի բնորոշել գրականության մեջ, ինչպես Ֆ. Էնգելսը իր խորիմաստ նշումով:

Ոչ ոք ղեկուս այնպես մարգարեաբար չի կանխատեսել մեր ժողովրդի ազգային ու սոցիալական ազատագրության նախադրյալը, ինչպես այդ արել է Ֆ. Էնգելսը:

Հայ մարքսիստ-լենինյանների ավագագույն սերունդը՝ Ստեփան Շահումյանի գլխավորությամբ, հետևողականորեն հավատարիմ մնաց այս դրույթներից բխող ստրատեգիական և տակտիկական սկզբունքներին, որոնք իրականացան Մեծ Հոկտեմբերի հաղթանակով և գրանցվեց ապահովվեց Հայ ժողովրդի սոցիալիստական վերածնունդը:

Դառնանք Հովսեփ Սթարեկյանին:

Հ. Սթարեկյանի հիշյալ հոգվածաշարը լույս տեսավ գերմանական սոցիալ-դեմոկրատիայի Օրդան «Neue Zeit» հանդեսում, 1895 թ. № 27, 28, 32 և 33 Atb ստորագրությամբ:

Հ. Սթարեկյանը մասնակցել է Կոուցկու և Պարվուսի կողմից գրված մի կոչին, որը հրատարակվել է գերմանական և ավստրիական սոցիալ-դեմոկրատական մամուլում և վերաբերել է Տաճկաստանում տեղի ունեցող հայկական քաղաքներին:

Առաջիմ սրանք են Հ. Սթարեկյանի՝ ինտենսիվ թվականների հայ մարքսիստներից մեկի գործունեությունն ու վաստակը բնութագրող փաստերը:

Մենք շեշտում ենք «առաջիմ», որովհետև գտնում ենք, որ ղեկուս առաջին րաչլերն են արվել Հ. Սթարեկյանի գրական արտադրանքի ուսումնասիրման գործում: Պետք է լրջորեն ուսումնասիրվի նրա հոգվածաշարը «Neue Zeit»-ում: Պետք է հետազոտվի նրա արխիվը, մասնավորապես նրա գերմաներեն գրած տետրակները, որոնք 1932 թ. ապրիլին Հովսեփ Սթարեկյանի ընտանիքը տրամադրում էր, ընկեր Սարգիս Կասյանին, համաձայն վերջինիս խնդրանքի:

Ընկ. Ս. Կասյանը ծրագրում էր, ինչպես ինքն է գրում 1932 թ. ապրիլի 7-ին Հ. Սթարեկյանի որդուն հասցեագրած նամակում, որոշ լրացումներ անել ու վերացնել անճշտությունները «Կոմունիստական մանիֆեստ»-ի հայերեն երկրորդ հրատարակության իր առաջաբանում, հաև հանգամանորեն կանգ առնել 1894 թ. թարգմանության և թարգմանչի վրա: Դժբախտաբար ընկեր Ս. Կասյանին չհաջողվեց այդ ծրագիրը իրականացնել, թեև նա մի րաչլ առաջ զնաց, դուրս ձգելով 1927 թ. հայերեն հրատարակության առաջաբանից 1894 թ. Շտուտգարդի թարգմանչի վերաբերյալ չհիմնավորած ենթադրությունը:

Համառոտակի նշենք, թե ինչ վախճան ունեցավ Հովսեփ Սթարեկյանը, երբ նա 1895 թ. աչրենի վերադարձավ:

Ութսունական թվականների մարքսիստ Գեորգ Ղարաչյանը, երեսնում եղած ժամանակ հանդիպում է ունեցել Հովսեփ Սթարեկյանի հետ: Ահա թե ինչ է հաղորդում Գ. Ղարաչյանը այդ մասին իր «Անցյալի հիշողություններ»-ի երկրորդ մասում. «Մի ուրիշ ինտելիգենտի հետ ծանոթագա 1895—96 թվականներին երեսնում: Դա գլուղատնտես Հովսեփ Սթարեկյանն էր. նա իր մասնագիտությունը ստացել էր Գերմանիայում, համոզմունքով սոցիալ-դեմոկրատ էր և մարքսիզմի կողմնակից: Մենք մոտ բարեկամացանք, նույնիսկ լինում էինք միմյանց մոտ: Ազնիվ երիտասարդ էր Հովսեփը»:

Սակայն պիտի նշենք, որ մարքսիզմի կողմնակից Հովսեփ Սթարեկյանի հետագա գործունեությունը չբնթացավ քաղաքական պայքարի հունով:

Հովսեփ Սթարեկյանը աշխատում էր որպես գլուղատնտես: Նրա հայրը՝ հաշտարար գատավոր ներսես Ասլանի Սթարեկյանը, ցարական իշխանության հետ երկար ժամանակ գատ վարելուց հետո, որպես հատուցում ցարական կառավարության կողմից Ղարաբաղում բռնադրված իր հոգվածսի, ստանում է Փարաբարի և Վարմադյարի (այժմ Արևաշատ) մեջ բնկած անջրդի և անմալ քարքարոտ «զոներ» կոչված պետական հողամասը:

¹ «Բանվորի ձայն», Թիֆլիս, 1920, № 8:

Ահա այդ «դուր» հողամասի մշակման վրա է ծախսում Գերմանիայում գյուղատնտեսական բարձրագույն կրթություն ստացած Հովսեփ Աթաբեկյանը իր խոր գիտական պատրաստությունն ու հռանդը: Բանկային վարկի միջոցով ձեռնարկվում է ջրանցքի կառուցումը՝ Զանգու գետից: Կիրառելով ցանրաշրջանառության համապատասխան և ագրոտեխնիկայի նորագույն մեթոդը, գիտնական-գյուղատնտես Հովսեփ Աթաբեկյանը անապատից քաջ առ քաջ նոր մշակելի հողեր էր նվաճում և ծածկում դրանք հարուստ բուսականությամբ:

Դրան զուգընթաց Հովսեփ Աթաբեկյանը հարեան Վարմազյար գյուղի բնակիչներից կազմակերպում է դասընթացներ, որտեղ բացի գրագիտությունից, գյուղացիք ծանոթանում են գյուղատնտեսական նորագույն գիտելիքներին, տիրապետում Հովսեփ Աթաբեկյանի կիրառած ցանրաշրջանառության նոր սխեմներին, ինչպես նաև խաղողի մշակման նոր ձևերին:

Հովսեփ Աթաբեկյանը դպրոց է բաց անում նաև հարեան Փարաբար գյուղում և իր գյուղատնտեսական գիտելիքներն ու առաջավոր փորձը տարածում նաև Փարաբարի գյուղացիության մեջ:

Բն՝ ջրանցք անցկացնելը, և թե՛ մյուս ագրոտեխնիկական ձեռնարկումները պահանջում էին խոշոր դրամական միջոցներ: Հովսեփ Աթաբեկյանի հայրը թաղվում է պարտքերի մեջ, և հազիվ ի վիճակի է լինում ապահովել իր գիտնական-գյուղատնտես որդուն միայն 50 ուրլի ամսականով:

1896 թ. Հովսեփ Աթաբեկյանը ամուսնանում է իր ուսանողական շրջանի բնակչուհի և Գերմանիայում երաժշտական կրթություն ստացած ու կատարելագործված Հեղինե Հովսեփի Ավանիսի հետ:

1900 թ. Հովսեփ Աթաբեկյանը, միջոցների սղության պատճառով, թողնում է հոր՝ պարտքերով ծանրաբեռնված կալվածքը և բնտանիքով փոխադրվում՝ Բաբու-Բալխանի և ծառայության մտնում նավթարդյունաբերող Միրզոնների գործարանում՝ ինժեներ-տեխնիկական պոզիցիայով:

Համապատասխան սանիտարական պայմանների բացակայության հետևանքով այդ տարիներին Բաբի նավթահանքերում մոլեգնում էին համաճարակային հիվանդությունները, և ջրանցից չի խուսափում նաև Հովսեփ Աթաբեկյանը, որը երկարատև ու ծանր հիվանդանում է:

Ապարիկվելուց հետո նա նորից շարունակում է իր ծառայությունը, ազատ ժամանակ զբաղվում է թարգմանությամբ և ուսումնասիրություններով:

1903 թ. վերջը, արդեն բազմամարդ բնտանիքի տեր Հովսեփ Աթաբեկյանը թողնում է Բաբուն և վերադառնում հոր մոտ, որը ծանր մենակություն էր ապրում և որի հետ ջերմ սիրով կապված էին թե՛ որդին, և թե՛ հարսը:

Որդու վերադառնալուց մի քանի ամիս անց, չդիմանալով սպարտերի ճնշմանը, 1904 թ. մալիսին ներսև Աթաբեկյանը, որը բազմաթիվ վկայությունների համաձայն մեծ հեղինակություն էր վայելում շրջակա գյուղացիության մեջ և արժանացել էր նրանց համակրանքին, ինքնապանդությամբ վերջ է տալիս իր կյանքին, թողնելով իր մահից հետո 40 հազար ուրլի սպարտ:

Վրա է հասնում ուսու-ճապոնական պատերազմը և Հովսեփ Աթաբեկյանը, զորահավաքի ենթարկվելով՝ զինվորական ծառայության է կանչվում որպես պահեստի սպա: Նա բնտանիքով փոխադրվում է Ղարս, ուր ապրում է մի քանի տարի:

Հովսեփ Աթաբեկյանի կենսագիտությունից մեկը՝ Ա. Օլթեցյանը, հայտնում է, որ Հ. Աթաբեկյանը «սիրվում է ժողովրդից», բնորվում դպրոցի հոգաբարձու, ապա 1907 թ. Ղարսի զինվորական շրջանի կողմից բնտրվում է երկրորդ Պետական դումայի անդամ, նա մեծ ճիգ ու ջանք է թափում Ղարսին բաղարային ինքնաշարժություն տալու խնդիրը Պետական դումայում օրենսդրական կարգով անցկացնելու համար, այդ նպատակով կապվում է մինչև իսկ Դումայի կառնական Ֆրակցիայի հետ:

1907 թ. հունիսին, երկրորդ Պետական դումայի ցրվելուց հետո, Հովսեփ Աթաբեկյանը վերադառնում է Երևան՝ հոր կալվածքը: Նոր վարկերի միջոցով Հ. Աթաբեկյանը անձամբ նախագծում է և իրականացնում մի շարք հիդրո-տեխնիկական կառուցումներ, խաղողի նոր տեսակներ է մշակում ու զարգացնում, գրում է մի շարք գյուղատնտեսական աշխատություններ, որոնցից մեկը՝ «Ճիշտ ցանրաշրջանառության նշանակությունը Անդրկովկասի բամբակագործության պարզացման համար», 1912 թ. կարդացվում է Թիֆլիսում դումարված բամբակագործների համագումարում և տպագրվում նրա հրատարակություններում:

Այդ թվականներին Հովսեփ Աթաբեկյանին զբաղեցնում են նաև մեր երկրում անասնաբու-
ժության զարգացման, անասունների և թռչունների ջնդերի ազնվացման խնդիրները և այդ ուղ-
ղությամբ նա գրում է մի շարք ուսումնասիրություններ:

Նշանակալից է նաև գիտնական-գյուղատնտես Հովսեփ Աթաբեկյանի մզած պայքարը
Սևանի ջրերի գիշատիչ օգտագործման նախագծի դեմ, նախագիծ, որը այդ տարիներին առա-
ջադրել էր անգլիական «Սոյուզարտ» ընկերությունը:

Ձկնորդանալով հատուցել տարեցտարի աճող պարտքերը, որոնք արվում էին տնտեսու-
թյան մեջ նորանոր ձևակերպումների համար, Հովսեփ Աթաբեկյանը որոշում է նորից ընտանի-
քով փոխադրվել Բարու. իր կրտսեր ինժեներ հղբոր՝ Ասլան Աթաբեկյանի մոտ և հաստատվել
այնտեղ: Այդ որոշումը նա իրականացնում է 1913 թ. ղեկավարելով:

Սակայն վրա է հասնում առաջին իմպերիալիստական պատերազմը և 1914 թ. աշնանը
Հովսեփ Աթաբեկյանը նորից կանչվում է զինվորական ծառայության, դարձյալ Ղարսում:

1916 թ. հունվարի 15-ին Ղարսում Հովսեփ Աթաբեկյանը ինքնասպանություն է գործում:

Փսանական թվականներին ընկեր Աշոտ Հովհաննիսյանը եղել է նրա նախկին կալվածքում և
հետևյալն է գրում Հ. Աթաբեկյանի մասին. «Մինչև վերջին տարիները պահվում էր նրա քա-
վականաչափ հարուստ մարքսիստական գրադարանը: Այստեղ առիթ ենր ունեցել տե-
սելու Հեգելի, Ֆոյերբախի և գիտական սոցիալիզմի կլասիկների մի շարք հին հրատարակու-
թյունները, այլև մարքսիստական բազմաթիվ նոր գրքեր. գերմանական սոցիալ-դեմոկրատական
պարագլուխների, Աթաբեկյանի հին բարեկամների, ավտոգրաֆներով»:

Հովսեփ Աթաբեկյանի բոլոր կենսագիրներն անխորի բնութագրում են նրան, որպես մա-
րտիր «նորը բարոյական ըմբռնման տեր տնձ», «անբիծ հոգի», «շիտակ ու պարկեշտ մարդ».
«հազվագյուտ եռանդի տեր մարդ»:

1957 թ. Հովսեփ Աթաբեկյանի աճյունը այժմյան Երրորդ սովխոզից փոխադրվում է Էջմիած-
նի Գայանե վանքի բակը և թաղվում հոր գերեզմանին կից:

Ահա այսպիսի վախճան ունեցավ ինքնուրույն թվականների մարքսիստ Հովսեփ Աթա-
բեկյանը, գերմանական սոցիալ-դեմոկրատների բնութագրմամբ՝ այդ «վառվռուն հայ ընկերը»:

ИОСИФ АТАБЕКЯНЦ

А. М. ЕГИАЗАРЯН

(Р е з ю м е)

В предисловии к первому армянскому изданию Коммунистического Манифеста (Женева, 1904 г.) Степан Шаумян сообщает, что данный перевод Манифеста представ-
ляет собою соединение преимущественно двух армянских переводов, исправленное и
отредактированное в соответствии с последним немецким изданием. Этими двумя ар-
мянскими переводами являлись:

Штутгартский перевод 1894 г. и кавказский перевод 1901 г.

В нашей литературе, за редким исключением, во-первых—игнорируется указание
выше сообщение Степана Шаумяна, во-вторых—дается неправильная оценка перевод-
чику Штутгартского армянского перевода «Манифеста» — Иосифу Атабекянцу и, в
третьих—однобоко трактуется содержание переписки между Ф. Энгельсом и Иосифом
Атабекянцем.

Изучение печатных и архивных материалов, а также воспоминания современников
проливают новый свет как на личность Иосифа Атабекянца, так и на содержание пе-
реписки между ним и Ф. Энгельсом.

¹ Աշ. Հովհաննիսյան, Էջմիածնի և հայկական հարցը, էջ 75 (ընդգծում
իմ. է—Ա. Ե.):

Выводы следующие:

а) Носиф Атабекянц был не простым лишь переводчиком произведений К. Маркса и Ф. Энгельса, а последователем их учения.

б) Письмо Носифа Атабекянца от 1. XI. 1894 г., адресованное Ф. Энгельсу, содержит ряд положений, оценок и задач как кавказских, так и турецких армян, с новых позиций обосновывающих эти положения, в отличие от позиций, защищаемых тогда армянскими буржуазными и мелкобуржуазными националистическими партиями.

в) Письмо Ф. Энгельса от 24. XI. 1894 г. Носифу Атабекянцу с исключительной глубиной характеризует обстановку жизни и развития армянского народа и пророчески предвосхищает исторические условия его социального и национального освобождения.